ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...

ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(կրկնություն)

Կարդա՛ պատմությունը, և որտեղ անհրաժեշտ է, լրացրո՛ւ բաց թողնված տառը, երկհնչյունը կամ կրկնակ բաղաձայնը (խմբային աշխատանք):

ՓԱՅՏՓՈՐԻԿԸ

Ճուղուր Երևանցի

Անտառում բնակվում է մի շատ տար_ինակ թռչուն, որն անընհատ թ_կթ_կացնում է՝ կտուցով հարվածելով հաստաբ_ն ծառերի կեղ_ներին և կարծես այնտեղ ինչ-որ բան է փնտրում: Ճիշտ է, մնացած թռչուններն էլ նստում են ծառերի ճ_ղերին ու ցողուններին, բայց նրանք սովորականի պես եր_ում են, ծլվլում, դայլայլում, իսկ փայտփորիկը կտուցով անընհատ թ_կթ_կացնում է, և այդ ձայներն ամեն օր տարածվում են անտառով մեկ:

Ոմանք ասում են, որ այս թռչունը կտուցով փորում է ծառի կեղ_ը և այնտեղից մի_ատներ, թ_թու_ներ գտնելով՝ իր ամեն_դյա սնունդն է հայ_այթում: Դրա համար էլ նրան անվանում են փայտափոր, ավելի քնք_շ՝ փայտփորիկ: Իսկ ես մեկ ուրիշ պատմություն գիտեմ փայտփորիկների մասին: Դե՛, ուրեմն ի՛նձ լսեք:

Այս թռչունները շատ աշխատասեր են ու միշտ էլ ցանկացել են իրենց համար բ_ն սարքել ծառերի փչակներում: Թռչելով հեռու-հեռավոր երկրներից՝ եկել են անտառ, ծառերի վրա փ_ակներ գտել, իրենց ուժեղ կտուցներով դրանք մա_ել քամու բերած փայտի կտորներից ու չորացած տեր_ներից: Հետո էլ փայտփորիկներն իրենց ամուր պոչիկներով ավլել են փ_ակների հատակը և պատրաստվել այնտեղ բնակվելու, բայց ավա_, նրանք միշտ էլ չ_ն հասել իրենց երազանքին:

Բանն այն է, որ հանդուգն սկ_ռները, որոնք գետնի վրա միշտ

շփոթվում ու անկոչ հ_րի պես ապրում էին մկների գետնափոս բնե-
ռում, բարձրանալով ծառի վրա՝ նույն կերպ էին վարվում փայտփո-
ռիկների հետ: Բնավ մտքներով էլ չ_ին անցկացնում, որ նախ_ռոք
մաքրած ու կոկիկ տեսքի բերված պատրաստի փ_ակները նա-
խատեսված չ_ն իրենց համար և տեր ունեն: Ասեմ ավելին: Երբ
փայտփորիկներն ար_արանում ու բացատրում էին, որ փ_ակներն
իրենց բներն են, սկ_ռները միշտ նույն պատասխանն էին տալիս.

– Ի՞նչ եք ամեն օր գլուխներս ցավեցնում ձեր բողոքներով. ան-
տառը բոլորիս համար է, և ոչ ոք իրավունք չունի միանձնյա տի-
րանալու նրա բարիքներին: Ձեզնից հետո մենք ենք մտել փ_ակ,
ուրեմն մենք էլ այնտեղ պիտի ապրենք: Գնացե՛ք և ձեզ համար
ուրիշ փ_ակ փ_նտրեք:

– Բայց ինչո՞ւ ուրիշ փ_ակ փ_նտրենք, երբ որ մերն ունենք,–
ըն_իմանում էին փայտփորիկներն ու եր_եք հաջողության չ_ին
հասնում, որովհետև գործ ունեին սուր ատամներով և իրենցից
մի քանի անգամ մեծ սկ_ռների հետ, որոնց դեմ ուժով անզոր էին
պայքարել:

Ու այսպես ամեն անգամ փայտփորիկները գլխիկոր հեռանում
էին իրենց փ_ակներից, որոնց վրա այդքան չարչարանք էին թա-
փել: Բայց, ի՞նչ արած, անտառում ուժեղը միշտ հա_թում է թույլին:
Անհրաժեշտ էր մի ճար անել: Այս հարցով փայտփորիկները որո-
շեցին գանգատվել թռչունների արքա արծվին.

– Մե՛ր թա_ավոր, մեզ մի խոր_ո՛ւրդ տուր, թե ինչպես վարվենք
այս հանդուգն սկ_ռների հետ: Ախր ամեն ան_ամ աշխատանք ենք
անում, մեծ ջան_եր թափում, մաքրում ու կար_ի ենք բերում ծառե-
րի փ_ակները, որ հետո էլ այնտեղ բ_ն դնենք, ձա_ուկներ հանենք,
բայց արի ու տե՛ս, որ այդ սկ_ռները մեզ վռնդում են մեր փ_ակ-
ներից:

– Ես ձեզ խոր_ուրդ կտամ կռվի չբ_նվել սկ_ռների հետ,–պա-
տասխանեց խելացի արքան,– նրանք ձեզնից ուժեղ են, և դուք
հաստատ կպարտվեք:

– Իսկ դուք չ_՞ք կարող նրանց պատժել,– խնդրեցին թռչուններն
իրենց արքային.–չէ՞ որ դուք էլ ուժեղ, հզոր ճանկեր ու մեծ կտուց
ունեք: Բա ինչո՞ւ նրանց չ_ք պատժում:

– Ճիշտն ասած, սկ_ռներն ինձնից վախենում են: Եր_եմն ես

նրանց ծառերի ճ_ղերի վրայից ճանկում ու երկինք եմ բարձրացնում,- պատասխանեց արծիվը:

- Երևի հենց դրա համար էլ սկ_ռները նախ_նտրում են ապ_ել փ_ակներում, որպեսզի պաշտպանվեն մեր արքա արծվի օ_ային հար_ակումներից,- միաբերան բացականչեցին փայտփորիկները:

- Ես ձեզ ընդ_ամենը մի խորհուրդ կտամ: Ավելի լավ է՝ մ_ս թռչունների նման դուք էլ ձեր բ_նը չոր խոտերով հյուսեք ծառի ճ_ղերին և այդտեղ բնակվեք: Վստահ եղեք, որ ձեր իսկ հյուսած բները շատ հարազատ կլինեն ձեզ համար, և դուք այնտեղ ավելի եր_անիկ կապրեք, քան փ_ակներում:

Այդ օրվանից փայտփորիկները հետևեցին իրենց արքայի խոր_րդին և սկսեցին ծառերի ճ_ղերին բ_ն հյուսել:

Առաջադրանքներ

1. Տեքստից դուրս գրիր գրության և արտասանության տարբերություն ունեցող բառեր և մեկնաբանիր:
2. Գտիր և տրված գծակարգում դասդասիր բարդ, ածանցավոր, բարդածանցավոր բառերը՝ գծիկով առանձնացնելով բաղադրիչները:

Բարդ բառեր	Ածանցավոր բառեր	Բարդածանցավոր բառեր

3. Ելնելով թեմայի բովանդակությունից՝ կազմիր հարցեր՝ հեղինակի հետ հարցազրույց վարելու համար, գրառիր և համապատասխանաբար ձևակերպիր հարցազրույցի տեքստը (զույգային աշխատանք):
4. Տեքստից ելնելով՝ կազմիր գովազդ:
5. Համառոտիր տեքստը՝ պահպանելով շարադրանքի իմաստային հաջորդականությունը:
6. Առանձնացրու քեզ համար իմաստային և գեղարվեստական տեսակետից կարևորագույն դրվագներ, արտահայտություններ և մեկնաբանիր:

7. Տեքստում ճանաչի՛ր պատկերավոր արտահայտությունները և դրանք կիրառի՛ր բանավոր կամ գրավոր խոսքում:

8. Ազատ փոխարինի՛ր անծանոթ բառերը և արտահայտությունները հոմանշային բացատրություններով:

9. Ընդգծի՛ր մակդիրները:

Եվ քամին անընդհատ բերում էր անտառի այդ լիակուրծք խշշոցն ու մռունչը, ու թվում էր, թե հենց մեր դռան առջև է աղմկահույզ, հողմածեծ անտառը:

10. Ընդգծի՛ր փոխաբերական իմաստով գործածված բառակապակցությունները:

Նորից ձյունն է մարմանդ իջել՝
Գլխին դրած ձերմակ գլխարկ,
Ձերմակ երազ փռել ճամփին,
Ժայռն է կապել սառցե գոտի,
Ցրտից ծառերն են կծկվել,
Ու սառույցի կալանքի տակ
Մեղմացել է երգը գետի...
Իմ Եղեգիս գետի ափին:

11. Նման, պես, իբրև բառերով կազմի՛ր համեմատություններ:

12. Նկարագրի՛ր աշունը՝ գործածելով մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում: